| 4610 | - Տնային տնտեսություններին դրամով վճարվող սոցիալական ապահովության վճարներ | 4711 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4620 | - Սոցիալական ապահովության բնեղեն նպաստներ ծառայություններ մատուցողներին | 4712 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4630 | ԱՌՅԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՍԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄՔ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒԶԵԻՑ) (տող4631+տող4632+տող4633+տող4634) | x | 2,374,121.0 | 2,374,121.0 | X | 2,780,621.0 | 2,780,621.0 | X | 2,531,254.4 | 2,531,254.4 | X |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 4631 | -Հուղարկավորության նպաստներ բյուջեից | 4726 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4632 | -Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից | 4727 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4633 | -Բնակարանային նպաստներ բյուջեից | 4728 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 2,374,121.0 | 2,374,121.0 | X | 2,780,621.0 | 2,780,621.0 | X | 2,531,254.4 | 2,531,254.4 | X |
| 4640 | ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող4641) | x | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 4641 | -Կենսաթոշակներ | 4741 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4700 | 1.7 ԱՅԼ ԾԱՆՍԵՐ (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770) | x | 24,379,925.5 | 25,114,469.7 | 20,000.0 | 13,413,744.7 | 13,902,726.7 | 20,000.0 | 13,271,483.9 | 13,653,483.9 | 0.0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 4710 | ՆՎՐՈՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՇ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐՎԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4711+տող4712) | x | 907,998.8 | 907,998.8 | X | 1,621,649.3 | 1,621,649.3 | X | 1,542,512.8 | 1,542,512.8 | X |
| | որից՝ | | | | | | | X | | | X |
| 4711 | - Տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին նվիրատվություններ | 4811 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4712 | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 907,998.8 | 907,998.8 | X | 1,621,649.3 | 1,621,649.3 | X | 1,542,512.8 | 1,542,512.8 | X |
| 4720 | ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՒՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵՐ ԵՎ ԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄՈՒՅԱՆՆ ԵՎԱՏԱՄՔ (տող4721+տող4722+տող4723+տող4724) | x | 117,313.1 | 117,313.1 | X | 142,991.4 | 142,991.4 | X | 104,907.1 | 104,907.1 | X |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 4721 | -Աշխատավարձի ֆոնդ | 4821 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4722 | -Այլ հարկեր | 4822 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4723 | -Պարտադիր վճարներ | 4823 | 117,313.1 | 117,313.1 | X | 142,991.4 | 142,991.4 | X | 104,907.1 | 104,907.1 | X |

| | | | | | | | | | | | |
|------|---|------|--------------|--------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| 4724 | -Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ կիրառվող տույժեր | 4824 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4730 | ՊՆՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒՂԱՆՆԵՐ (տող4731) | x | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 4731 | -Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ | 4831 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4740 | ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ՊՆՏԱՐԱՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ՎՆԱՆՆԵՐԻ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՎԱՆՁՆՈՒՄ (տող4741+տող4742) | x | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 4741 | -Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում | 4841 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4742 | -Այլ բնական պատճառներով ստացած վնասվածքների վերականգնում | 4842 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4750 | ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ՎՆԱՆՆԵՐԻ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՎԱՆՁՆՈՒՄ (տող4751) | x | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 4751 | -Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում | 4851 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 4760 | ԱՅԼ ԾԱՆՍԵՐ (տող4761) | x | 19,074,357.6 | 19,074,357.6 | X | 2,762,746.3 | 2,762,746.3 | X | 2,718,688.8 | 2,718,688.8 | X |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 4761 | -Այլ ծախսեր | 4861 | 19,074,357.6 | 19,074,357.6 | X | 2,762,746.3 | 2,762,746.3 | X | 2,718,688.8 | 2,718,688.8 | X |
| 4770 | ՊԱՀՈՒՍԱՑՅՈՒՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող4771) | x | 4,280,256.0 | 5,014,800.2 | 20,000.0 | 8,886,357.7 | 9,375,339.7 | 20,000.0 | 8,905,375.2 | 9,287,375.2 | 0.0 |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | 4,280,256.0 | 5,014,800.2 | 20,000.0 | 8,886,357.7 | 9,375,339.7 | 20,000.0 | 8,905,375.2 | 9,287,375.2 | 0.0 |
| 4772 | այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | x | 754,544.2 | 754,544.2 | X | 508,982.0 | 508,982.0 | X | 382,000.0 | 382,000.0 | X |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ (տող5100+տող5200+տող5300+տող5400) | x | 4,888,297.4 | X | 4,888,297.4 | 5,487,745.5 | X | 5,487,745.5 | 4,483,914.2 | X | 4,483,914.2 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130) | x | 4,743,497.4 | X | 4,743,497.4 | 5,342,945.5 | X | 5,342,945.5 | 4,345,647.2 | X | 4,345,647.2 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող5111+տող5112+տող5113) | x | 3,813,281.5 | X | 3,813,281.5 | 4,276,341.1 | X | 4,276,341.1 | 3,484,290.0 | X | 3,484,290.0 |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 5111 | - Շենքերի և շինությունների ձեռք բերում | 5111 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 895,440.0 | X | 895,440.0 | 383,740.0 | X | 383,740.0 | 252,028.8 | X | 252,028.8 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 2,917,841.5 | X | 2,917,841.5 | 3,892,601.1 | X | 3,892,601.1 | 3,232,261.2 | X | 3,232,261.2 |
| 5120 | ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող5121+ տող5122+տող5123) | x | 740,165.9 | X | 740,165.9 | 873,754.4 | X | 873,754.4 | 751,547.3 | X | 751,547.3 |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 5121 | - Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 20,000.0 | X | 20,000.0 | 45,000.0 | X | 45,000.0 | 44,826.0 | X | 44,826.0 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 49,442.6 | X | 49,442.6 | 61,031.1 | X | 61,031.1 | 45,282.1 | X | 45,282.1 |
| 5123 | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5123 | 670,723.3 | X | 670,723.3 | 767,723.3 | X | 767,723.3 | 661,439.3 | X | 661,439.3 |
| 5130 | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134) | x | 190,050.0 | X | 190,050.0 | 192,850.0 | X | 192,850.0 | 109,809.9 | X | 109,809.9 |

| | | | | | | | | | | | |
|------|--|------|--------------|---|--------------|--------------|---|--------------|--------------|---|--------------|
| 6310 | ԱՐԶՐԱՐԺԷ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ | 8311 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| 6400 | ԶԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ * (տոող6410+տոող6420+տոող6430+տոող6440) այդ թվում՝ | x | -3,425,753.2 | X | -3,425,753.2 | -3,425,753.2 | X | -3,425,753.2 | -3,052,833.4 | X | -3,052,833.4 |
| 6410 | Հողի ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ | 8411 | -3,425,753.2 | X | -3,425,753.2 | -3,425,753.2 | X | -3,425,753.2 | -3,052,833.4 | X | -3,052,833.4 |
| 6420 | Օգտագործող շենքերի ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ | 8412 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| 6430 | ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ | 8413 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| 6440 | ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԶԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ | 8414 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՍ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(03/01/2017-29/12/2017թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|------------|--|------------------------|--------------------|--------------------|------------------------|--------------------|--------------------|--------------------------|--------------------|--------------------|
| | | Ընդամենը (u.4 + u5) | այդ թվում | | Ընդամենը (u.7 + u8) | այդ թվում | | Ընդամենը (u.10 + u11) | այդ թվում | |
| | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 7000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴ ԿԱՍ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) | -68,000.0 | 0.0 | -68,000.0 | -910,210.3 | 0.0 | -910,210.3 | 1,488,882.8 | 1,958,253.1 | -469,370.3 |

| | | | | | | | | | | | |
|------|--|------|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|
| 8311 | 1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) (տող 8312+տող 8313) | | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8312 | - բողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | 9121 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| 8313 | - հիմնական գումարի մարում | 6121 | 0.0 | X | | 0.0 | X | | 0.0 | X | |
| 8320 | 1.2. Վարկեր և փոխառություններ (ստացում և մարում) տող 8321+տող 8340 | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8321 | 1.2.1. Վարկեր (տող 8322+տող 8330) | | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8322 | - վարկերի ստացում | 9122 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| 8330 | - ստացված վարկերի հիմնական գումարի մարում | 6122 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 |
| 8340 | 1.2.2. Փոխառություններ (տող 8341+տող 8350) | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 8341 | - փոխառությունների ստացում | 9122 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |
| 8350 | - ստացված փոխառությունների գումարի մարում | 6122 | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X | 0.0 | 0.0 | X |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____ մարտի 2018թ.

N ____- Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով անկախ աուդիտոր «Ասատրյան» ՍՊԸ-ի ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետին, 82-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN 1 - 5 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____ մարտի 2018թ.

N ____ -Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով անկախ աուդիտոր «Ասատրյանս» ՍՊԸ -ի ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետին, 82-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN 1 - 5 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Վ. ՆԻԿՈՅԱՆ

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

Զ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Վ. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Տեղեկանք-հիմնավորում)

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածներով ամրագրված դրույթները, որի հիմքում ընկած է հավաստիությունը և հստակությունը:

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 72,479,069.9 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 72,289,608.7 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 100.3%: Ընդ որում՝ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված (ճշտված) 72,276,808.7 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 72,449,035.8 հազար դրամ՝ ապահովելով 100.2% կատարողական:

Երևան քաղաքի 2017 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 20,143,170.5 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 20,341,410.6 հազար դրամ կամ 101.0%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավելի է 2016 թվականի համապատասխան ցուցանիշից 595,347.6 հազար դրամով:

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 70,990,187.0 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 97.0%-ը: Ծրագրված ցուցանիշների նկատմամբ թերֆինանսավորումները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով:

Հարկ է նշել, որ 2017 թվականի բյուջեի ծրագրված 910,210.3 հազար դրամ պակասուրդի դիմաց բյուջեն փաստացի կատարվել է 1,488.882.8 հազար դրամ հավելուրդով: Միաժամանակ բյուջետային տարվա ավարտին պարտքեր չեն թողնվել և

փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Եկամուտներ

Երևանի 2017 թվականի բյուջեի փաստացի եկամուտների 20.7%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 6.9%-ը՝ գույքային հարկեր անշարժ գույքից, 8.4%-ը՝ գույքային հարկեր այլ գույքից, 4.7%-ը՝ ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներից, 0.6%-ը՝ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 30.0%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհների հաշվին, 49.2%-ը՝ այլ եկամուտների հաշվին, որից 0.2%-ը՝ շահաբաժիններից, 1.4%-ը՝ գույքի վարձակալության դիմաց եկամուտներից, 42.1%-ը՝ համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից և 4.7%-ը՝ վարչական գանձումներից:

Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտների գծով 2017 թվականին ծրագրվել էր առավելագույն գանձման ցուցանիշ, իսկ ընթացիկ տարվա հարկերի գանձման վերջնաժամկետով պայմանավորված առկա էին օբյեկտիվ խնդիրներ, պետք է նշել, որ նախորդ տարի ձեռնարկված միջոցառումները հնարավորություն են տվել ապահովելու ընդհանուր ծրագրային ցուցանիշների կատարումը, իսկ որոշ դեպքերում նաև դրանց գերակատարումը:

Տեղական տուրքերի կազմում 36.2% տասակարար կշիռ է ապահովել արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1,256,964.0 հազար դրամի չափով փաստացի հավաքագրված տուրքը: Ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի

համար տուրքերի մասով մուտքերը կազմել են 493,829.9 հազար դրամ ծրագրված 435,324.0 հազար դրամի նկատմամբ: Ավտոկայանատեղի համար տուրքերի գծով ծրագրված 920,000.0 հազար դրամ ցուցանիշի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 997,046.5 հազար դրամ, որից 56,408.0 հազար դրամը՝ ծառայողական ավտոկայանատեղի կազմակերպման համար: Թեև տեղական տուրքերի որոշ տեսակների մասով առկա են ծրագրված ցուցանիշների թերակատարումներ, սակայն պետք է հաշվի առնել, որ ցուցանիշները ծրագրվում են կանխատեսելիության սկզբունքով, իսկ գանձումն իրականացվում է հաշվետու տարում փաստացի հաշվառման տվյալներով, որն էլ իրականացվել է ամբողջությամբ:

Այսպիսով հարկային եկամուտների և տուրքերի մասով 2017 թվականի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 15,010,854.9 հազար դրամ՝ ծրագրված (ճշտված) 14,599,087.5 հազար դրամի նկատմամբ կամ գերակատարվել է 411,767.4 հազար դրամով, ինչ իր հերթին ավել է 2016 թվականի փաստացի կատարողականից 790,596.0 հազար դրամով կամ 5.6%-ով, այդ թվում՝

- գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 10,513,035.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 10,354,663.2 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 101.5%, որը 2016 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 391,211.2 հազար դրամով,

- հողի հարկի մասով մուտքերը կազմել են 621,609.8 հազար դրամ, նախատեսված 663,751.8 հազար դրամի դիմաց,

- տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 3,467,221.4 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 3,193,672.5 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 108.6%,

- պետական տուրքերի գծով փաստացի հավաքագրվել է 408,988.8 հազար դրամ՝ ծրագրված 387,000.0 հազար դրամի դիմաց, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 73,183.9 հազար դրամ,

- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 335,804.9 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 21,776,238.1 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 21,776,261.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100.0%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 13,430,355.1 հազար դրամ, իսկ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներից (սուբվենցիաներից) մուտքերը 8,343,083.0 հազար դրամ:

Այլ եկամուտներ.

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով նախատեսված էր 35,914,260.2 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 35,691,976.9 հազար դրամ, որից.

- շահաբաժինների գծով փաստացի մուտքերը կազմել են 134,430.7 հազար դրամ՝ կանխատեսված 124,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 108.4%,

- գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 1,003,173.5 հազար դրամ, ծրագրված 874,495.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 114.7%, ինչը պայմանավորված է Երևան քաղաքի զբոսայգիներում, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից զբաղեցրած տարածքների հաշվառման, գույքագրման, իրավական փաստաթղթերի հավաքագրման, ինչպես նաև վերջիններիս կողմից փաստացի զբաղեցրած հողամասերի սահմանների վերաճշտման և Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված պայմաններով պայմանագրերի վերանայման ու տեղեկատվական բազայի հստակեցման գործընթացով,

- պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, քաղաքային լուսավորության, կոշտ թափոնների կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման,

պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 30,361,421.2 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 30,370,177.2 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածի 100.0%-ը,

- օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների գծով ճշտված բյուջեով նախատեսված 100,000.0 հազար դրամ ցուցանիշի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 121,502.7 հազար դրամ,

- տեղական վճարների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 3,066,555.0 հազար դրամ, նախատեսված 3,508,761.6 հազար դրամի նկատմամբ կամ նախատեսվածի 87.4%-ը, ինչը պայմանավորված է աղբահանության վճարների գծով կանխատեսված (ըստ մակերեսի) և փաստացի հավաքագրված ցուցանիշների տարբերությամբ:

- ինքնակամ կառույցների օրինականացման վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 337,828.3 հազար դրամ՝ ծրագրված 240,000.0 հազար դրամի դիմաց, կամ նախատեսվածի 140.8%-ը,

- վարչական իրավախախտումներից փաստացի մուտքերը կազմել են 338,540.4 հազար դրամ, նախատեսված 461,048.4 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածի 73.4%-ը, ինչը պայմանավորված է ինչպես որոշումների թվի կրճատմամբ, այնպես էլ առաջին և վերաքննիչ դատարաններում քննվող գործերի ժամանակատարությամբ,

- համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից մուտքերը կազմել են 17,909.6 հազ. դրամ,

- համայնքի գույքին պատճառված վնասների փոխհատուցումից մուտքերը կազմել են 4,282.3 հազար դրամ,

- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 283,381.6 հազար դրամ՝ նախատեսված 225,777.7 հազար դրամի դիմաց:

Ծախսեր

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 70,990,187.0 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 73,199,819.0 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 97.0%-ը: Փաստացի կատարված ծախսերը եկամուտների տեսակարար կշռում կազմում են 98,0%: Ընդամենը փաստացի ծախսերից 70,490,782.7 հազար դրամը կամ 99.3%-ը ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ 881,404.3 հազար դրամը կամ 1.2%-ը՝ կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), ինչպես նաև 3,602,509.9 հազար դրամի ծախսեր իրականացվել են ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի հաշվին:

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 42.1%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 16.2%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 10.6%:

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը | Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված | Փաստացի ծախս | Կատարման % |
|---|------------------------------------|--------------|------------|
| Աշխատանքի վարձատրություն | 6,305,063.5 | 5,788,338.9 | 91.8% |
| Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման | 14,160,382.3 | 13,593,402.1 | 96.0% |

| | | | |
|--|---------------------|---------------------|--------------|
| Սուբսիդիաներ | 34,278,653.2 | 34,112,716.5 | 99.5% |
| Դրամաշնորհներ | 849,362.0 | 811,587.1 | 95.6% |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 2,780,621.0 | 2,531,254.4 | 91.0% |
| Այլ ծախսեր | 13,413,744.7 | 13,271,483.9 | 98.9% |
| Հիմնական միջոցներ | 5,342,945.5 | 4,345,647.2 | 81.3% |
| Պաշարներ | 144,800.0 | 138,267.0 | 95.5% |
| Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | -650,000.0 | -549,676.4 | 84.6% |
| Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | -3,425,753.2 | -3,052,833.4 | 89.1% |
| Ընդամենը | 73,199,819.0 | 70,990,187.0 | 97.0% |

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը | Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված | Փաստացի կատարված | Կատարման % |
|---|--------------------------------------|------------------|------------|
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 8,333,348.2 | 7,486,468.9 | 89.8% |
| Պաշտպանություն | 57,650.0 | 42,245.9 | 73.3% |
| Տնտեսական հարաբերություններ | 9,042,153.3 | 9,054,473.2 | 100.1% |
| Շրջակա միջավայրի պաշտպանություն | 7,587,917.2 | 7,580,634.4 | 99.9% |
| Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 5,030,129.9 | 4,344,726.6 | 86.4% |
| Առողջապահություն | 345,000.0 | 248,993.4 | 72.2% |
| Հանգիստ, մշակույթ և կրոն | 3,758,806.8 | 3,678,235.3 | 97.9% |
| Կրթություն | 28,218,719.8 | 27,855,262.6 | 98.7% |
| Սոցիալական պաշտպանություն | 1,939,736.1 | 1,793,771.6 | 92.5% |

| | | | |
|--------------------|---------------------|---------------------|--------------|
| Պահուստային ֆոնդեր | 8,886,357.7 | 8,905,375.2 | 100.2% |
| Ընդամենը | 73,199,819.0 | 70,990,187.0 | 97.0% |

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի ծախսերի կատարողականի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների և տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի վերլուծությամբ (բացառությամբ պատվիրակված լիազորությունների) նախատեսված ցուցանիշներից փաստացի կատարողականների շեղումը պայմանավորված է գրեթե բոլոր ծրագրերի գծով առկա տնտեսումներով:

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի կատարողականն ըստ վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) հետևյալն է՝

հազար դրամ

| h/h | Վարչական շրջանի անվանումը | 2017 թվականի բյուջեով նախատեսված | 2017 թվականին փաստացի ծախսը | Կատարման %-ը 2017 թ. նախատեսվածի նկատմամբ |
|-----|---|----------------------------------|-----------------------------|---|
| 1. | Երևանի քաղաքապետարան (առանց վարչական շրջանների) | 47,610,848.30 | 46,857,070.09 | 98.42% |
| 2. | Աջափնյակ | 2,511,302.10 | 2,342,076.51 | 93.26% |
| 3. | Ավան | 1,553,969.50 | 1,472,701.25 | 94.77% |
| 4. | Արաբկիր | 2,839,000.80 | 2,622,791.02 | 92.38% |
| 5. | Դավթաշեն | 1,148,899.00 | 1,068,738.80 | 93.02% |
| 6. | Էրեբունի | 2,257,490.00 | 2,163,090.62 | 95.82% |
| 7. | Կենտրոն | 3,676,980.90 | 3,524,298.42 | 95.85% |
| 8. | Մալաթիա-Սեբաստիա | 2,923,548.20 | 2,775,576.77 | 94.94% |
| 9. | Նոր Նորք | 2,998,265.80 | 2,835,629.04 | 94.58% |
| 10. | Նորք-Մարաշ | 547,286.80 | 508,897.15 | 92.99% |
| 11. | Նուբարաշեն | 365,044.10 | 328,780.17 | 90.07% |
| 12. | Շենգավիթ | 2,854,495.40 | 2,709,529.95 | 94.92% |

| | | | | |
|-----|-----------------|----------------------|----------------------|---------------|
| 13. | Քանաքեռ-Զեյթուն | 1,912,688.10 | 1,781,007.25 | 93.12% |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 73,199,819.00 | 70,990,187.04 | 96.98% |

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեով կատարված ծախսերի վերլուծությունը և հիմնավորումը՝ ըստ ծախսային ծրագրերի.

1. Կառավարման մարմնի պահպանում ծրագրով 2017 թվականի ճշտված բյուջեով նախատեսվել էր 7,960,099.8 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 7,192,279.3 հազար դրամ կամ նախատեսվածի 90.4%-ը, որը պակաս է 2016 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 19,596.8 հազար դրամով: Ծրագրի գծով 2017 թվականի խնայողությունը կազմել է 710,563.81 հազար դրամ: Այս ծախսերն իրականացվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմե համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Նշված ծրագրով խնայողությունն ու այն ծախսերի հնարավոր նվազեցումը, որոնք չեն խոչընդոտի Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների բնականոն գործունեության իրականացմանը, քաղաքային իշխանության որդեգրած կարևորագույն սկզբունքներից է:

Նշված ծրագրով նախատեսված ծախսերում մեծ տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի գծով ծախսերը՝ 4,723,000.3 հազար դրամ՝ նախատեսված 5,211,863.9 հազար դրամի դիմաց կամ 90.6%: Աշխատավարձի գծով ծախսերն իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշմամբ սահմանված հաստիքացուցակի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հաստատված (ճշտված) հաստիքացուցակով նախատեսված 1998 միավոր հաստիքի դիմաց աշխատավարձի փաստացի վճարում իրականացվել է միջինը 1975 հաստիքի համար:

Երևանի քաղաքապետարանի աշխատողների պարգևատրման գծով ծախսերը կազմել են 639,212.3 հազար դրամ՝ նախատեսված 758,538.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 84.3%: Պարգևատրման ֆոնդի հաշվին պարգևատրվել են հիմնականում տարվա ընթացքում լրացուցիչ աշխատանք կատարող աշխատողները, ինչպես նաև տարեվերջին Երևանի քաղաքապետարանի գրեթե բոլոր աշխատողները (բացառությամբ տարվա ընթացքում նկատողություն ստացած աշխատողների)՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 244,878.8 հազար դրամ՝ նախատեսված 275,344.2 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 88.9%, որը ներառում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչական շենքերի էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը:

Կոմունալ ծառայությունները ներառում են վարչական շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման ծառայությունների հետ կապված ծախսերը, որի գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 15,593.9 հազար դրամ նախատեսված 16,344.8 հազար դրամի դիմաց:

Կապի ծառայությունների գծով ծախսերը կազմել են 165,368.6 հազար դրամ՝ նախատեսված 207,666.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 79.6% և ներառում են փոստային և սուրհանդակային ծառայությունների, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունների համար տրամադրված գումարները: Ծախսերի նվազեցումը հիմնականում պայմանավորված է հեռախոսակապի ապահովման օպերատորի առաջարկած սակագներով, ինչի արդյունքում 2017 թվականին կատարված ծախսերը պակաս են 2016 թվականին կատարված ծախսերից 21,333.1 հազար դրամով:

Ապահովագրական ծախսերը կազմել են 4,360.0 հազար դրամ՝ նախատեսված 4,684.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 93.1%, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պարտադիր ապահովագրական գործընթացն իրականացնելուն:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը կազմել են 83,093.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 91.0%, որը պակաս է 2016 թվականի փաստացի ցուցանիշից 8,232.0 հազար դրամով: Այս գումարի շրջանակներում ապահովվել է քաղաքապետարանի թվով 15 ծառայողական ավտոմեքենաների վարձակալությունը, որը ներառում է նաև այդ ավտոմեքենաների ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի աշխատավարձը և այլն, ինչպես նաև Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճարի մի մասը:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը կազմել են 47,478.0 հազար դրամ՝ նախատեսված 64,750.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 73.3% կամ խնայողությունը կազմել է 18,322.03 հազար դրամ: Ծրագրի շրջանակներում Երևանի ավագանու, քաղաքապետարանի և վարչական շրջանների թվով 40 պատվիրակություններ (222 անձ) գործուղվել են թվով 25 քաղաքներ: Երևանի քաղաքապետարանի կողմից 2017 թվականին իրականացված արտաքին նպատակային քաղաքականության արդյունքում պաշտոնական այցեր են կատարվել Ստեփանակերտ, Վիեննա, Փարիզ, Ստրասբուրգ, Թեհրան, Ամստերդամ, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Ստավրոպոլ, , Հոռն, Պեզաո, Դուբայ, Պլեսսի Ռոբինսոն, Ամման, Օդեսա, Չերքասարի, Մինսկ, Քիշնև, Մարսել, Լիոն, Լոպոտա, Թբիլիսի: Գործուղումների գծով բոլոր ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով:

Վարչական ծառայությունների գծով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում գրքերի (փաստաթղթերի) կարման համար ծախսերը կազմել են 3,161.2 հազար դրամ՝ նախատեսված 4,247.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 74.42%, որն ավելի է 2016 թվականի փաստացի ցուցանիշից 1,665.3 հազար դրամով:

Համակարգչային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 39,044.0 հազար դրամ՝ նախատեսված 39,059.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 99.9%-ով, ինչը ներառում է քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի,

տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, ինչպես նաև վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման ծառայությունները:

Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 10,807.0 հազար դրամ՝ նախատեսված 11,010.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 98.8%-ով, ինչը 6,492.7 հազար դրամով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Նշված գումարի շրջանակներում իրականացվել է թվով 516 համայնքային ծառայողների ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վերապատրաստման գործընթացը:

Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 28,587.0 հազար դրամ՝ նախատեսված 34,487.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 83.0%-ով, ինչը պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 9,303.0 հազար դրամով: Այս ծախսերը ներառում են պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական ծառայությունների ձեռք բերման ծախսերը:

Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 1,950.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 2,000.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 97.5%-ով, ինչի շրջանակներում իրականացվել է Երևանի քաղաքապետարանի 2016 թվականի բյուջեի անկախ աուդիտ անցկացնելու աուդիտորական մասնագիտացված կազմակերպության ծառայությունների ձեռք բերումը: Հարկ է նշել, որ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեով ի սկզբանե նախատեսվել էր 10,000.0 հազար դրամ, սակայն մրցույթի ընթացքում ծառայությունը ձեռք է բերվել շատ ավելի ցածր գնով:

Ներկայացուցչական ծախսերի գծով փաստացի կատարողականը կազմել է 124,983.1 հազար դրամ՝ նախատեսված 125,081.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 99.9%-ով, ինչի շրջանակներում ապահովվել է

պատվիրակությունների և հյուրերի ընդունելությունների և արարողակարգային բնույթի միջոցառումների (ներառյալ արարողական հուշանվերների, հյուրանոցային և տրանսպորտային ծախսերի, թարգմանչական ծառայությունների, հյուրասիրության, հանքային ջրի և այլն) հետ կապված ծախսերը, ինչպես նաև ապահովվել են Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջանների աշխատակազմերում առօրյա ներկայացուցչական ծախսերը: Երևանի հետ համագործակցության շրջանակներում 2017 թվականին մայրաքաղաք է այցելել գործընկեր քաղաքների շուրջ 26 պատվիրակություն: Ընդ որում՝ Էրեբունի-Երևան-2799 տոնակատարության շրջանակներում Երևանը հյուրընկալել է 13 երկրի 23 քաղաքների պատվիրակությունների:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսերը ներառում են Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները (հավաքարարների աշխատավարձ), նյութերի ձեռք բերումը, ընթացիկ այլ աշխատանքները, ինչպես նաև վարչական շրջանների աշխատակազմերի գործառույթներով պայմանավորված օպերատիվ հաղորդակցման համար անհրաժեշտ ծառայությունները, որի գծով փաստացի կատարողականը կազմել է 94,117.5 հազար դրամ կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 94.4%-ով:

Մասնագիտական ծառայությունների գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 8,069.4 հազար դրամ՝ նախատեսված 10,227.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 78.9%-ով, ինչը 1,053.7 հազար դրամով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, իսկ մատուցված ծառայությունները ներառում են փաստաթղթերի արխիվացման, գազի, ավտոմատ հեռախոսակայանների սպասարկման, ինչպես նաև հնոցապահի ծառայությունները:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով փաստացի կատարողականը կազմել է 257,883.7 հազար դրամ՝ նախատեսված 271,034.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 95.2%: Այս հոդվածով նախատեսված գումարների շրջանակներում իրականացվել են քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների

պահպանման և նորոգման, գույքի, համակարգչային տեխնիկայի և շահագործվող այլ սարքավորումների ընթացիկ նորոգումն ու պահպանումը:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով փաստացի իրականացվել է 64,982.5 հազար դրամի ծախս՝ նախատեսված 72,898.2 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 89.1%-ով: Նշված հոդվածի շրջանակներում ձեռք են բերվել զուտ գրասենյակային նյութեր (թուղթ, գրիչ, արագակար, մատիտ, թղթապանակ, ռեգիստր և այլն), իսկ նախատեսված ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով:

Տրանսպորտային նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 178,797.7 հազար դրամ՝ նախատեսված 201,388.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 88.8%, ինչը ներառում է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների վառելիքի, քանոնային և անվադողերի ձեռք բերման ծախսերը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի որոշ ստորաբաժանումների գործառությանին առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաները ծառայողական նպատակներով օգտագործման համար տրված վառելիքի ծախսերը (հիմք՝ Երևանի քաղաքապետի 2017 թվականի հունվարի 16-ի N 48-Ա որոշում):

Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով փաստացի ծախսը կազմել է 16,927.0 հազար դրամ՝ նախատեսված 22,277.3 հազար դրամի դիմաց, ինչը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 8,348.0 հազար դրամ՝ նախատեսված 8,850.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 94.3% և ներառում է տոնական և հիշատակի օրերի, ինչպես նաև այլ միջոցառումների համար նախատեսված ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերումը:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 285,218.5 հազար դրամ, նախատեսված (ճշտված) 285,218.5 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 100.0%: Այն իրենից

ներկայացնում է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործմանն ՓԲԸ-ի պահպանման ծախսերը:

Այլ նպաստներ բյուջեից հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 40,224.8 հազար դրամ՝ նախատեսված 43,100.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Դրամական փոխհատուցում տրամադրելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի ապրիլի 5-ի N 629-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ա և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 12-ի «Երևան քաղաքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին» N 20-Ա որոշումներով սահմանված կարգով կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում է վճարվել Երևան քաղաքի ավագանու անդամներին, ինչպես նաև մեկ անձի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվել է խեղման նպաստ:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 1,909.1 հազար դրամ՝ նախատեսված 3,127.3 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել է քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենաների տեխնիկական գննման և տուրքերի վճարման ծախսերը:

Այլ ծախսերի հոդվածով նախատեսված 8,078.1 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

Տրանսպորտային սարքավորումների հոդվածով ավտոմեքենայի ձեռք բերման համար նախատեսվել էր 35,000.0 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 34,920.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.8%:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 41,941.4 հազար դրամ՝ նախատեսված 49,442.6 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 84.8%, ինչը 32,357.7 հազար դրամով պակաս է 2016 թվականի նույն ցուցանիշից: Այն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի գույքի և տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) փոխարինմանը:

Այլ մեքենաներ և սարքավորումներ հողվածով նախատեսված 29,300.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 16,075.10, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանում տեղադրված ֆանկոլների՝ նորերով փոխարինմանը, ինչպես նաև աշխատակազմի ստորաբաժանումներում անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը:

Ոչ նյութական հիմնական միջոցներ հողվածով փաստացի ծախսը կազմել է 253.0 հազար դրամ նախատեսված 300.0 հազար դրամի դիմաց:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,346.0 հազար դրամ՝ նախատեսված 13,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 33.4%: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևանի քաղաքապետարանի Բուզանդի 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի տանիքի հիմնանորոգման, ինչպես նաև Նոր Նորք վարչական շրջանի վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

3. Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց վճարման ծախսեր ծրագրով փաստացի ծախսը կազմել է 9,784.0 հազար դրամ նախատեսված 14,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում Ֆիտչ միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատել է հանրային ֆինանսների բնագավառում Երևան քաղաքին շնորհված B+ վարկանիշը դրական կանխատեսմամբ:

4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 86,937.7 հազար դրամ՝ նախատեսված 92,931.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 93.6%: Այս ծրագրով բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 9-ի N 115-Ն որոշմամբ սահմանված կարգով:

5. Նախագծային աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 60,919.3 հազար դրամ՝ նախատեսված 126,750.0 հազար դրամի դիմաց, ինչպես նաև 2016 թվականի փաստացի ցուցանիշից 16,872.2 հազար դրամով պակաս: Նշված գումարի շրջանակներում ձեռք են բերվել ինչպես Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեով, այնպես էլ Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեով նախատեսված որոշ կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

6. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 5,800.0 հազար դրամ՝ նախատեսված 18,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 32.2%, ինչի շրջանակներում նախորդ տարիների կատարված աշխատանքների վերլուծության հիման վրա կատարվել են Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պահանջներով պայմանավորված վերլուծական աշխատանքներ:

7. Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 20,000.0 հազար դրամ՝ նախատեսված 20,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 100.0%, որն ուղղվել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մնացած հատվածների գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակման աշխատանքներին:

